



ՈՐՈՇՈՒՄ N 3

25 օգոստոսի 2020 թվականի

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՌԱՎԱՐԻՉ-ՌԵԿՏՈՐԻ ԵՎ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ
ՀԵՏԱԶԳՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՃՇՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 140-րդ կետերով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավարի և Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության կանոնակարգերով սահմանված իրավական ընթացակարգերի պահպանման անհրաժեշտությամբ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ղեկավարի պաշտոնի համար հոգաբարձուների խորհրդի 31.01.2020 թ. № 66 որոշմամբ 23.03.2020 թ. նշանակված, ինչպես նաև նույն հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնի համար հոգաբարձուների խորհրդի 31.01.2020 թ. № 68 որոշմամբ 16.03.2020 թ. նշանակված, այնուհետև հետաձգված ընտրությունների իրավական ընթացակարգի ճշտման նպատակով հարցում ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետ՝ համաձայն Հավելվածի: